


Նախապես հաստատվել է		Հաստատվել է
«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ Խորհրդի 2025թ.մայիսի -ի նիստում		ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Խորհրդի նախագահ  L.Հովհաննիսյան 30 հունիսի 2025թ.		 Խոլդարյան հունիսի 2025թ.

«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
2024 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Տեղեկատվություն ընկերության մասին.
2. Ընկերության կառավարման մարմինները.
3. Ընկերության ստեղծման նկարագիրը և նպատակները.
4. Ընկերության կանոնադրությամբ և լիցենզիայով նախատեսված իմ ու նպատակները.
5. Արտադրական գործունեությունը.
6. Ֆինանսատնտեսական գործունեությունը.

1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ - «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն

կրճատ - «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ

ռուսերեն լրիվ - Закрытое акционерное общество «Расчетный центр»

կրճատ - ЗАО «Расчетный центр»

անգլերեն լրիվ - «Settlement Center» Closed Joint-Stock Company

կրճատ - «Settlement Center» CJSC

Իրավաբանական կարգավիճակ՝ փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)

Գրանցման համարը՝ 273.120.03313

Գրանցման վկայականը՝ 03 Ա 056014

Գրանցման վայրը և տարեթիվը՝ ք. Երևան, 31.10.2002թ

Իրավաբանական հասցեն՝ ՀՀ, 0009, ք. Երևան, Արմյան փողոց 27

ՀՎՀՀ 01544167

հեռախոս (+37410) 56 53 53

ֆաքս (+37410) 54 27 79

Էլ. փոստ office@setcenter.am

Ընկերության բանկային հաշվի համարները՝

ԱՇԲ Ադապյան մասնաճյուղ 2474600500050000

Կոնվերս բանկ 1930000600150100

ՀՀ Կառավարության 10 հոկտեմբերի 2002թ. «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծելու մասին N 1663-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ կանոնադրական կապիտալը սահմանվել է 304,62 մլն.դրամ, որը կազմում է 30462 հասարակ (սովորական) բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի արժեքը 10000 ՀՀ դրամ է: Նշված բաժնետոմսերի դիմաց ՀՀ կառավարությունը վճարումն իրականացրել է ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության կողմից «Հայէներգո» ՓԲԸ-ին տրամադրված բյուջետային վարկից 304,62 մլն.դրամ գումարը մարելու եղանակով: Որոշման 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ Ընկերությանը տրամադրվել է «Հայէներգո» ՓԲԸ վարչական շենքի (ք.Երևան, Արմյան 27) 3-րդ հարկից (վարձակալության հիմունքներով) 400 քառ.մետր տարածք: 2023թ. հոկտեմբերի 10-ին «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն և «ԷԷՀՕ» ՓԲԸ-ն ամբողջ վարձակալած տարածքի համար, որը կազմում է 633,75 քառ.մետր, կնքել են մեկ միասնական պայմանագիր՝ 5 տարի գործողության ժամկետով:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ կառավարման մարմիններն են՝

1. Բաժնետիրոջ ընդհանուր ժողովը,
2. Խորհուրդը,
3. Գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը:

ՀՀ Կառավարության N 1694-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող ընկերության 100% բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ում Խորհրդի անդամների թվաքանակը սահմանվել է 5 անդամ՝ մեկական անդամ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից, ՀՀ պետգույքի կառավարման կոմիտեից, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանից, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից և Ընկերության գլխավոր տնօրենը՝ ի պաշտոնե:

Բաժնետիրոջ ընդհանուր ժողովը ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

Խորհուրդն իրականացնում է ընկերության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

Խորհրդի անդամներն են՝

1. Լիանա Հովհաննիսյան - Խորհրդի նախագահ,

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի օգնական:

2. Վարդան Ենգիդունյան - Խորհրդի անդամ,

ՀՀ ՏԿԵՆ Պետական գույքի կառավարման կոմիտեի պետական բաժնեմասի կառավարման վարչության՝ պետական մասնակցությամբ ընկերությունների կառավարման և մոնիտորինգի բաժնի պետ:

3. Ռոմիկ Ավոյան - Խորհրդի անդամ,

ՀԱՊՀ Էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի տնօրեն:

4. Երանուհի Ազոյան - Խորհրդի անդամ,

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գլխավոր հաշվապահի տեղակալ:

5. Նորայր Հարությունյան - Խորհրդի անդամ,

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

Գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությունն հանդիսացող հարցերի:

Կառավարման մարմինները իրենց գործունեությունն իրականացնում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով ամրագրված իրավասությունների համաձայն:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն ստեղծվել է ՀՀ Կառավարության 10 հոկտեմբերի 2002թ. «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին N 1663-Ն որոշմամբ:

Ընկերությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ հետապնդող առևտրային կազմակերպություն է: Ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ և բանկային հաշիվներ:

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է ՀՀ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պահանջներով, մասնավորապես՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) կողմից տրված լիցենզիայի պայմանների, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանների, ՀԾԿՀ որոշումների և նորմատիվ ակտերի պահանջներով:

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2002 թվականի նոյեմբերի 11-ի «Հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» No 80Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրել է Էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիա: ՀԿԾՀ-ի 2017թ. մայիսի 17-ի թիվ 164Ա որոշմամբ ընկերությանը վերապահվել է Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայություն մատուցելու գործառույթներ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ՆԱԽԱՏԵՍԱԿԸ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը: Գործունեության հիմնական տեսակը Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում Էլեկտրական Էներգիայի և հզորության հաշվառման և ֆինանսական հաշվարկների իրականացումն է հետևյալ գործառույթներով.

- 1) Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի գործունեության կազմակերպում.
- 2) Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների հաշվառում, նրանց միջև կնքված պայմանագրերի, Էլեկտրական Էներգիայի (հզորության) ներկրում կամ արտահանում նախատեսող պայմանագրերի հաշվառում.
- 3) Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում կնքված պայմանագրերի, ինչպես նաև ներկրում կամ արտահանում նախատեսող պայմանագրերի համաձայն գնված և վաճառված Էլեկտրական Էներգիայի (հզորության) հաշվառում, փաստաթղթերի կազմում և մեծածախ շուկայի առևտրի մասնակիցներին և ծառայություն մատուցողներին ներկայացում.
- 4) Էլեկտրաէներգետիկական համակարգի Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման ավտոմատացված համակարգի շահագործում և աշխատունակ վիճակում պահպանում.
- 5) Էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնների համաձայն Էլեկտրաէներգիայի (հզորության) առևտրային և վերահսկիչ (տեխնիկական) հաշվառման համալիրների տեղակայման, փոխարինման, դրանց

աշխատունակության ստուգման և հաշվիչների ստուգաչափման գործառույթների կորորդինացում, ինչպես նաև այդ հաշվառման համալիրների միջոցով ԷլեկտրաԷներգիայի (հզորության) առևտրային և վերահսկիչ հաշվառում.

- 6) Հաշվառման տվյալների բազայում հաշվառման տվյալների արխիվացում և պահպանում.
- 7) Էլեկտրական Էներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկում, իսկ հաղորդման ցանցում՝ նաև փաստացի կորուստների մեծությունների հաշվառում.
- 8) Էլեկտրական Էներգիայի (հզորության) միջպետական առևտրի խթանման և տարանցման ապահովման նպատակով համագործակցություն այլ երկրների համապատասխան կազմակերպությունների հետ.
- 9) Շուկայի կանոններով նախատեսված այլ գործառույթներ:

5. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի փետրվար ամսից ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել ՀՀ ԷլեկտրաԷներգետիկ շուկայի փուլային ազատականացման գործընթացին, ինչպես նաև տարածաշրջանում իրացման նոր Էներգետիկ շուկաներ փնտրելուն, ներկրման և արտահանման ակտիվ քաղաքականության միջոցով Հայաստանի Էներգետիկ անկախության ապահովմանը:

Համաձայն ՀՀ ԷլեկտրաԷներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների (այսուհետ՝ ԷՄԱ կանոններ) 107-րդ կետի պահանջների, Երաշխավորված մատակարարի հետ Էլեկտրական Էներգիայի մատակարարման պայմանագիր ունեցող սպառողները (բացառությամբ՝ բնակչության և Արտադրողի) ԷՄՇ կանոնների համաձայն պարտավոր են իրենց տվյալ լարման հաշվառման կետերի մասով ստանալ որակավորված սպառողի կարգավիճակ կամ ԷՄԱ կանոնների համաձայն ընտրել մատակարար հետևյալ ժամկետներում.

1) Հաղորդման ցանցին կամ Արտադրողին միացած, կամ 110 կՎ և բարձր լարման բոլոր այն սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում իրենց Հաղորդման ցանցի կամ Արտադրողի կամ 110 կՎ լարման բոլոր Առևտրային հաշվառքի սարքերով ունեցել են 1 մլն.կՎտժ և ավելի սպառում մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը,

2) 35 կՎ լարման այն Սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում իրենց 35 կՎ լարման բոլոր Առևտրային հաշվառքի սարքերով ունեցել են 1 մլն.կՎտժ և ավելի սպառում մինչև 2024 թվականի փետրվարի 1-ը,

3) 6 (10) կՎ լարման այն Սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում՝

ա. իրենց որևէ 6 (10) կՎ լարման Առևտրային հաշվառքի սարքով ունեցել են 1 մլն.կՎտժ և ավելի սպառում տվյալ հաշվառման կետի մասով՝ մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը,

բ. իրենց 6 (10) կՎ լարման բոլոր՝ 12 հազար կՎտժ սպառումը գերազանցող Առևտրային հաշվառքի սարքերով ունեցել են 1 մլն.կՎտժ և ավելի սպառում մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը,

4) այն սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում իրենց բոլոր՝ 12 հազար կՎտժ սպառումը գերազանցող Առևտրային հաշվառքի սարքերով՝ անկախ լարման մակարդակից, ունեցել են 1 մլն.կՎտժ և ավելի սպառում մինչև 2026 թվականի փետրվարի 1-ը,

5) այն սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում իրենց բոլոր՝ 12 հազար կՎտժ սպառումը գերազանցող Առևտրային հաշվառքի սարքերով՝ անկախ լարման մակարդակից, ունեցել են 500 հազար կՎտժ-ից մինչև 1 մլն.կՎտժ սպառում՝ մինչև 2027 թվականի փետրվարի 1-ը,

6) այն սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում իրենց բոլոր՝ 12 հազար կՎտժ սպառումը գերազանցող Առևտրային հաշվառքի սարքերով՝ անկախ լարման մակարդակից, ունեցել են 250 հազար կՎտժ-ից մինչև 500 հազար կՎտժ սպառում՝ մինչև 2028 թվականի փետրվարի 1-ը,

7) այն սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում իրենց բոլոր՝ 12 հազար կՎտժ սպառումը գերազանցող Առևտրային հաշվառքի սարքերով՝ անկախ լարման մակարդակից, ունեցել են 100 հազար կՎտժ-ից մինչև 250 հազար կՎտժ սպառում՝ մինչև 2029 թվականի փետրվարի 1-ը,

8) այն սպառողները, որոնք նախորդ օրացուցային տարում իրենց բոլոր՝ 12 հազար կՎտժ սպառումը գերազանցող Առևտրային հաշվառքի սարքերով՝ անկախ լարման մակարդակից, ունեցել են 50 հազար կՎտժ-ից մինչև 100 հազար կՎտժ սպառում՝ մինչև 2030 թվականի փետրվարի 1-ը:

2024 թվականի ընթացքում ՇԿԾ-ի միջոցով իրականացվել է՝

- Թվով 346 ԷՄՇ մասնակիցների ՇԿԾ մուտքի, դրանից դուրս գալու հետ կապված գործառույթներ:
- ԷՄՇ առևտրի մասնակցին հաշվեկշռման պատասխանատվության կարգավիճակի տրամադրման և փոփոխման, ինչպես նաև Որակավորված սպառողի կարգավիճակի տրամադրման հետ կապված գործառույթներ:
- Գրանցվել են ԷՄՇ մասնակիցների Հայտերը և հաշվառվել են Գործարքները:
- Կազմակերպվել է Օր առաջ շուկայի (ՕԱՇ) բնականոն աշխատանքը, այդ թվում՝ ՕԱՇ բլիթնգը:
- Կազմակերպվել է Կարգավորվող ուղիղ պայմանագրերի (ԿՈՒՊ) շուկայի բնականոն աշխատանքը, հաշվի առնելով մասնակիցների նախորդ տարիների Էլեկտրաէներգիայի սպառման ծավալների միջին արժեքները:
- Հաշվառվել են ԷՄՇ առևտրի մասնակիցների կողմից գնված և վաճառված Էլեկտրական Էներգիայի քանակները, իրականացվել են ՀԱՇ-ում (Հաշվեկշռման շուկա) առաջացած անհաշվեկշռույթների հաշվարկներ, որոնց վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը բերված է Հավելվածում:
- Կազմվել են վճարման ենթակա Էլեկտրական Էներգիայի, ինչպես նաև ԷՄՇ-ում մատուցված ծառայությունների վերաբերյալ ակտեր և ներկայացվել են ԷՄՇ մասնակիցների հաստատմանը՝ բացառությամբ Ուղիղ պայմանագրերի շուկայի չկարգավորվող բաղադրիչում (այսուհետ՝ ՉՈՒՊ բաղադրիչ) կնքված Գործարքների համար:
- Իրականացվել է ԷՄՇ-ում Առևտրային հաշվառումը, ինչպես նաև ԷՄՇ-ի արդյունավետ և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ գործառույթներ:

2024թ. ընթացքում, ՇԿԾ-ի տարբեր մոդուլներում, մեր կողմից հայտնաբերվել են տարբեր բնույթի շուրջ **78** խնդիրներ, այդ թվում՝ կախված ԷՄՇ Կանոնների փոփոխություններից, որոնք ըստ անհրաժեշտության լուծում են ստացել «Սիներգի Ինթերնեշնլ սիսթեմզ» ընկերության կողմից, իրականացվել է ՇԿԾ-ի թվով 8 թարմացումներ:

ԾԿԾ-ի անվտանգության պահանջներն ապահովելու համար 2024թ.-ին կնքվել է թվով ևս 150 ԾԿԾ մուտքի և կրիտիկական գործողությունների վավերացման երկֆակտորային նույնականացման համակարգի (Token) ձեռք բերման պայմանագիր: Մատակարարումն իրականացվել է 2025թ.-ին:

Էլեկտրաէներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգի (ԷՀԱՀ) անխափան աշխատանքն ապահովելու համար թարմացվել է գործող թվով 6 (AC-SE: 281; 241; 206; 212; 270 և AC-UE: 287) բանալիների տեխնիկական աջակցության արտոնագրերը: Նշված արտոնագրերի թարմացման ընդհանուր արժեքը կազմել է 3.5 մլն.դրամ:

Համաձայն Հաղորդման ցանցային կանոնների 252-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների, հաշվառման համալիրի և Սահմանազատման կետի միջև Էլեկտրատեղակայանքներում առաջացած Էլեկտրական Էներգիայի տեխնոլոգիական կորուստների մեծությունը Շուկայի օպերատորը հաշվարկում է ավտոմատացված եղանակով, ժամային կտրվածքով՝ ԾԿԾ-ի միջոցով:

2024 թվականի ընթացքում «Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ» ընկերության կողմից մշակվել է ՀԷՑ-Պերամիդա ԷՀԱՀ-ից Մեծածախ շուկայի մասնակիցների հաշվառման համալիրի և սահմանազատման կետի միջև Էլեկտրատեղակայանքներում առաջացած Էլեկտրական Էներգիայի տեխնոլոգիական կորուստների ժամային հաշվարկի ծրագրային մոդուլ, որի ամբողջական ներդրումն ավարտվել է 2025 թվականի մարտին:

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ աշխատանքային կարիքների համար անհրաժեշտություն էր առաջացել ձեռք բերել ԾԿԾ-ի աղետների վերականգնման միջավայրի տեղադրման և կարգավորման մեկանգամյա ծառայություն, որը ձեռք է բերվել «Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ» ընկերությունից, քանի որ նա է ԾԿԾ-ի հեղինակը, իսկ ԾԿԾ հենքը հանդիսանում է Synergy Intelligent Data Manager (IDM) ծրագրային ապահովման տեխնոլոգիան, որի հեղինակային իրավունքները պատկանում է «Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ» ընկերությանը: 2022թ. հունվարի 26-ին «Տետրա Տեկ Ի Էս Ինկ.», «Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ» ընկերության և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի միջև կնքված եռակողմ պայմանագրով «Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ» ընկերության կողմից ԾԿԾ փաթեթի համար տրված երաշխիքի պարագայում անհնար էր նշված ծառայությունը ձեռք բերել այլ ընկերությունից:

Շարունակվել են «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի մասնագետների և շուկայի մասնակիցների կողմից թվով շուրջ 1770 հաշվառման համալիրների ակնադիտարկման աշխատանքները՝ կազմելով համապատասխան արժանագրություններ:

Ընկերության համակարգմամբ իրականացվել են ստուգայցեր գործող շուրջ 286 արտադրող կայաններ և «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ 11 ենթակայաններ, հաշվառման համալիրների աշխատունակության և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին դրանց համապատասխանության նպատակով: Իրականացվել է ընկերության վեբ կայքի կատարելագործման աշխատանքներ:

Համաձայն ՀՀ կառավարության կողմից 2021թ.-ին հաստատված «ՀՀ Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի իրագործումն ապահովող ծրագիր ժամանակացույցի» 9.8 և 11.5 կետերի պահանջների, 2024թ. ընթացքում իրականացվել է տեղեկատվական անվտանգության գործնական իրականացման, ինչպես նաև կառավարման բարելավման նպատակով միջազգային ստանդարտների ներդնում մասնավորապես.

1. ISO 9001 – 2015 – Որակի Կառավարման համակարգեր (ներդնում և սերտիֆիկացում),
2. ISO 14001 – 2016 – Շրջակա միջավայրի կառավարում (ներդնում և սերտիֆիկացում),
3. ISO 50001 – 2023 – Էներգետիկական համակարգի կառավարում (ներդնում և սերտիֆիկացում),
4. ISO 27001 – 2022 – Տեղեկատվության անվտանգություն, կիբեռանվտանգություն և անհատական տվյալների պաշտպանություն՝ տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր – պահանջներ (ներդնում և սերտիֆիկացում),
5. ISO 37001 – 2016 – Կոռուպցիայի դեմ հակազդեցության կառավարման համակարգեր– պահանջներ և երաշխավորություններ կիրառման վերաբերյալ (ներդնում և սերտիֆիկացում),
6. ISO 31000 – 2019 – Ռիսկերի կառավարում սկզբունքներ և ղեկավարում (միայն ներդնում):

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն «Նարեկ» գիտահետազոտական ընկերության հետ համագործակցության շրջանակներում իրականացրել է նշված ստանդարտների ներդրման աշխատանքները, որից հետո 2024թ. նոյեմբերին «Quau Audit» UK Limited միջազգային սերտիֆիկացնող մարմնի կողմից անցել է Աուդիտ, ստացել է 5 միջազգային սերտիֆիկատներ և գրանցվել «IRQAO» International Register of Quality Assessed Organisations միջազգային ռեգիստրում:

Ստանդարտների ներդրման ընթացքում իրականացվել են հետևյալ գործառույթները.

- Ընկերության գործունեության վերլուծություն և գործընթացների ստանդարտի պահանջներին համապատասխանության գնահատում,
- Ստանդարտի փաստաթղթավորում՝ համապատասխան ձեռնարկ և ընթացակարգեր, որոնք նկարագրում են գործընթացները, փոստաթղթերը և ձևաթերթերը: Այդ փաստաթղթերը ստեղծելիս ներգրավվել են ընկերության համապատասխան աշխատակիցները, որպեսզի ստեղծված փաստաթղթերը և ձևաթերթերը համապատասխանեն ընկերության համար վերադաս մարմինների կողմից հաստատված ձևաչափերին, չբարդացնեն աշխատանքը, բայց միևնույն ժամանակ համապատասխանեն ստանդարտի պահանջներին,
- Ստանդարտի գործարկման համար իրականացվել է Ընկերության ղեկավարության և աշխատակիցների համար ստանդարտի ներդրման սկզբունքների և դրույթների պահպանման և թարմացման վերաբերյալ ուսուցում:
- Մշակվել է գործողությունների ծրագիր, իրականացվել է կազմակերպության գործունեության հետ կապված բոլոր ռիսկերի բացահայտում,
- Իրականացվել է Ներքին աուդիտորների ուսուցում՝ ամենամյա ներքին աուդիտ կազմակերպելու և համակարգը աշխատանքային վիճակում պահելու համար (տրամադրվել է անհատական «Փորձագետ աուդիտորի» վկայականներ),
- Նախնական աուդիտի իրականացում, որի ընթացքում գնահատվել է հիմնական չափանիշները և ցուցանիշները, սահմանվել են նպատակներն ու

խնդիրները, իրականացվել է ներդրման համար անհրաժեշտ գործողությունների դասակարգում և ներդրման պլանի կազմում,

- իրականացվել է ներքին աուդիտ, ստանդարտի սկզբունքներին համապատասխան պատրաստվել է դիտարկումների և անհամապատասխանությունների վերաբերյալ հաշվետվություններ,
- իրականացվել է ներդրված և գործող կառավարման համակարգի ամբողջ ցիկլի ապահովումը՝ բոլոր գործընթացների, ղեկավարության վերանայումների, աուդիտների և ներքին աուդիտից բխող գործողությունների արձանագրումները,
- Ընկերությանը հանձնվել է Սերտիֆիկատներ, 3 տարի ժամկետով,
- Ընկերությանը տրվել է խորհրդատվություն Ստանդարտի ներդրումը 1 տարի գործողության մեջ պահպանելու ընթացքում:

6. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Համեմատական անալիտիկ հաշվեկշիռ առ 31.12.2024թ., (մլն.դրամ)

	31.12.2024	31.12.2023
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ, որից՝	656,546	792,103
Հիմնական միջոցներ և անավարտ ոչ ընթացիկ սյուրթական ակտիվներ	179,662	210,292
Ոչ սյուրթական ակտիվներ	407,618	494,401
Օգտագործման իրավունքի գծով ակտիվներ	65,998	83,597
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	3,268	3,813
Ընդամենը ընթացիկ ակտիվներ, որից՝	310,990	239,493
Հումք և սյուրթեր	6,100	3,557
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	74,853	61,352
Դրամական միջոցներ	161,205	58,125
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	52,211	100,793
Կարճ. դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	0,002	3,778
Հետաձգված ծախսերի գծով ակտիվներ	16,619	11,888
Ընդամենը ակտիվներ	967,536	1,031,596
Սեփական կապիտալ, որից՝	378,947	346,347
Կանոնադրական կապիտալ	304,620	304,620
Կուտակված շահույթ	66,748	34,163
Պահուստային կապիտալ	7,579	7,564
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, որից՝	521,182	619,115
Ակտիվներին վերաբերող շնորհներ	453,289	540,820

Հետաձգված հարկային պարտավորություններ	10,683	6,342
Վարձակալության գծով պարտավորություններ	57,210	71,953
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	67,407	66,134
Գնումների գծով և այլ կրեդիտորական պարտքեր	9,546	9,661
Կարճ. կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	20,102	17,931
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	17,317	18,438
Ընթացիկ պահուստներ	7,880	7,542
Վարձակալության գծով պարտավորություններ	12,562	12,562
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	967,536	1,031,596

Հաշվետու տարվա հաշվեկշռի բաղադրիչների հիմնական փոփոխությունը վերաբերվում է՝

- Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ոչ ընթացիկ ակտիվների մնացորդային արժեքի նվազեցմանը՝ տարվա հաշվեգրված մաշվածության հաշվին,
- Տարեվերջին դեբիտորական պարտքերի մնացորդի ավելացմանը, Տարեվերջին կուտակված շահույթի ավելացմանը,
- Տարեվերջին ակտիվներին վերաբերող շնորհների հաշվեկշռային արժեքի նվազեցմանը:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը մնացել է անփոփոխ և կազմել է 304,620 մլն.դրամ: Հաշվետու տարվա հաշվապահական շահույթը՝ Նախքան շահութահարկի գծով ծախսի նվազումը, կազմել է 55,417 մլն.դրամ: 2024թ. շահութահարկի գումարը կազմել է 7,313 մլն.դրամ, հետաձգված հարկերի գծով փոխհատուցումը կազմել է 4,341 մլն.դրամ, ընդամենը շահութահարկի գծով ծախսը 11,654 մլն.դրամ է, արդյունքում Ընկերության 2024թ.-ի զուտ շահույթը կազմել է 43,763 մլն.դրամ: Քանի որ ընկերությունն աշխատում է հանրային ծառայությունների կարգավորման դաշտում, ուստի շահութաբաժնի հաշվարկման բազան հանդիսանում է ՀՀ ՀԾԿՀ կողմից հաշվետու տարվա համար պլանավորված և հաստատված սակագնի հաշվարկում ներառված տարեկան շահույթի մեծությունը, որը 2024 թվականի համար սահմանվել է 17,05 մլն.դրամ: Ծախսաբաժնի հաշվարկման համար զուտ շահույթին ավելացումները կազմել են 1,992 մլն.դրամ, որից հետո զուտ շահույթը կազմել է 19,042 մլն.դրամ: 2025թվականին ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարը 9,521 մլն.դրամ է: Ծախսաբաժնի հաշվարկման համար շահույթի հաշվարկը կատարվել է համաձայն «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սակագնային կարգավորման ենթակա ընկերությունների շահութաբաժնի հաշվարկման» հաշվետվության (կցվում է):

Ընկերության առևտրական դեբիտորական պարտքերը առ 31.12.2024թ՝

«Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ _____ 47,940 մլն.դրամ
«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ _____ 9,849 մլն.դրամ

«Էներջի Սփիլայ» ՍՊԸ _____	6,379 մլն.դրամ
«Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ _____	3,700 մլն.դրամ
«Էներեքս» ՓԲԸ _____	0,967 մլն.դրամ
«ԱՍԿԵ Գրուպ» ԲԲԸ _____	0,905 մլն.դրամ
«ԲԷՑ» ՓԲԸ _____	0,861 մլն.դրամ
«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ _____	0,856 մլն.դրամ
«Էներջի Պրովայդեր» ՓԲԸ _____	0,847 մլն.դրամ
«ԳՊՄ Գոլդ» ՍՊԸ _____	0,491 մլն.դրամ
«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ _____	0,284 մլն.դրամ
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ _____	0,180 մլն.դրամ
«Վոլտա Էներջի» ՍՊԸ _____	0,100 մլն.դրամ
Այլ դեբիտորական պարտքեր(մինչև 100հազ դրամ) _____	0,322 մլն.դրամ

Վերը թվարկված բոլոր դեբիտորական պարտավորությունները ընթացիկ առաջացող և վճարվող պարտավորություններ են (բոլոր պարտավորությունները մարվել են մինչև 2025թ. հունվարի 25-ը):

Ընկերության Կրեդիտորական պարտքերը առ 31.12.2024թ.`

«Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ» ԲԸ մասնաճյուղ _____	7,773 մլն.դրամ
«Էներգետիկայի ԳՀԻ» ՓԲԸ` _____	0,700 մլն.դրամ
«Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ(ԷլԷներգիայի դիմաց)` _____	0,527 մլն.դրամ
Այլ առևտրային կրեդիտ. պարտքեր(մինչև 100հազ դրամ)` _____	0,208 մլն.դրամ
Կրեդիտորական պարտքեր բյուջեին, ընդամենը _____	20,102 մլն.դրամ
որից`	
շահութահարկ _____	3,774 մլն.դրամ
ԱԱՀ _____	8,931 մլն.դրամ
Եկամտային հարկ _____	5,757 մլն.դրամ
այլ հարկեր, պարտադիր վճարներ _____	1,640 մլն.դրամ

Ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չունի, վերը նշված բոլոր պարտավորությունները ընթացիկ առաջացող և վճարվող պարտավորություններ են(բոլոր պարտավորությունները մարվել են մինչև 2025թ. հունվարի 25-ը, 2024թ. շահութահարկի պարտքը մարվել է 2025թ. ապրիլի 11-ին):

Ընկերությունը 01.01.2025թ. դրությամբ չունի ներգրավված միջոցներ և բոլոր ծախսերը կատարում է սեփական միջոցների հաշվին, ինչը վկայում է ֆինանսական կայունության մասին:

2025 թվականին ընկերությունը պետբյուջե է վճարել հետևյալ հարկերը և պարտադիր վճարները`

ԱԱՀ – 91,734 մլն.դրամ
Եկամտային հարկ – 74,149 մլն.դրամ
Դրոշմանիշային վճար – 5,099 մլն.դրամ

Եկամուտներ և ծախսեր

**«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ 2024թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի
կատարողական (մլն.դրամ)**

	Հոդված	պլան	փաստ
	I. Եկամուտներ	693,17	714,61
	- հիմնական գործունեությունից	494,55	507,03
	- Էլեկտրաէներգիայի արտահանումից	103,6	109,41
	- Շնորհի ստացված ակտիվներից եկամուտ	87,10	87,73
	- Ավանդից տոկոսային եկամուտ	7,92	10,14
	- այլ եկամուտներ	0,0	0,3
	II. Ծախսեր	676,12	659,20
1.	Հաշվարկներ աշխատակազմի հետ	368,46	368,46
2.	Տրանսպորտային միջոցների պահպ.ծախսեր	8,59	5,60
	- վառելիք	6,09	4,04
	- ավտոպահեստամասեր, նորոգում	2,5	1,56
3.	Մաշվածություն	128,25	124,49
	ա.թ.` շնորհի ստացված ակտիվների մաշվածություն	87,10	87,73
4.	Այլ ծախսեր (վարչական)	134,31	124,25
	- կապի ծառայություն	3,80	2,75
	- Էլեկտրաէներգիա	4,32	4,32
	- գործուղում	8,61	4,22
	- առևդիտ	0,83	0,83
	- գրասենյակային, տնտեսական և այլ առարկաներ	2,45	1,74
	- բանկեր	0,24	0,15
	- բաժանորդագրություն	0,11	0,11
	- ներկայացուցչական	0,53	0,11
	- ծրագրի սպասարկում և ձեռք բերում	106,65	104,33
	-անձնակազմի վերապատրաստում	0,37	0,19
	- չնախատեսված	6,40	5,50
5.	Լիցենզիոն տարեկան տուրք	5,00	5,0
6.	Կարգավորման պարտադիր վճար	0,55	0,55

7.	Նորմատիվ փաստաթղթերի մշակման, տեխնոլոգիական կորուստների հաշվարկման ծախսեր	7,0	7,0
8.	Վարձակալության վճար	22,18	22,18
9.	Հարկեր, տուրքեր, տարբեր վճարումներ	1,78	1,67
	Գործունեությունից շահույթ (վնաս)	17,05	55,41

Այսպիսով, հաշվետու տարվա ընթացքում ընկերությունը պլանավորված 693,17 մլն.դրամ եկամտի դիմաց փաստացի ստացել է 714,61 մլն.դրամ եկամուտ (տարբերությունը՝ 21,44 մլն.դրամ): 2024թ. համար պլանավորված 676,12 մլն.դրամ ծախսերի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 659,2 մլն.դրամ (տնտեսումը՝ 16,92 մլն.դրամ): Արդյունքում, ընկերության գործունեությունից հաշվապահական շահույթը կազմել է 55,41 մլն.դրամ, շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո Ընկերության 2024թ.-ի զուտ շահույթը կազմել է 43,763 մլն.դրամ:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն հանդիսանում է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սակագնային կարգավորման ենթակա ընկերություն: 2022թ. փետրվար ամսից, պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ազատականացմամբ, յուրաքանչյուր տարվա համար սակագնային կարգավորման ենթակա ընկերությունների ծառայությունների մատուցման սակագինը ՀԾԿՀ կողմից հաշվարկվում է ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգի Էլեկտրաէներգիայի արտադրության, առաքման կանխատեսվող հաշվեկշռի: Համաձայն այդ հաշվեկշռի 2024 թվականի համար կանխատեսվող ծավալներն այսպիսին էին.

- Էլեկտրական Էներգիայի սպառումներին շուկայում 6973,99 մլն.կՎտժ,
- Էլեկտրական Էներգիայի արտահանում 1459,49 մլն.կՎտժ:

Ելնելով այս ծավալներից՝ 2024թ. հունվարի 31-ին հաստատված նախահաշվով պլանավորվել է ներքին շուկայում սպառման և արտահանման ծառայության դիմաց ընդամենը 598,15 մլն.դրամի եկամուտ:

Սակայն 2024թվականի փաստացի ծավալները հետևյալն են.

- Էլեկտրական Էներգիայի սպառումներին շուկայում 7144,619 մլն.կՎտժ,
- Էլեկտրական Էներգիայի արտահանում 1537,834 մլն.կՎտժ:

2024թ. հունվար ամսվա համար շուկայի օպերատորի մատուցած ծառայությունների դիմաց ՀՀ ՀԾԿՀ-ն սահմանել է միասնական սակագին՝ 0,0659 դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի), իսկ փերվարից դեկտեմբեր ամիսների համար 0,0715 դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի):

1. Հիմնական գործունեությունից ՀՀ տարածքում մատուցած ծառայություններից եկամուտ

2024թ. հունվար ամսին արտադրող կայաններից գնվել է 680,945 մլն.կվտժ $\times$ 0,0659 դրամ , ընդամենը **44,874 մլն.դրամ**,

2024թ. փետրվարից դեկտեմբեր ամիսներին կայաններից գնվել է 6463,674 մլն.կվտժ $\times$ 0,0715 դրամ, ընդամենը **462,152 մլն.դրամ**:

2024թ. ՀՀ տարածքում մատուցած ծառայությունների դիմաց եկամուտը կազմել է՝

$$44,874 \text{ մլն.դրամ} + 462,152 \text{ մլն.դրամ} = 507,026 \text{ մլն.դրամ:}$$

2024թ. նախահաշվով պլանավորած **494,55 մլն.դրամից** փաստացի ստացված եկամուտն ավել է **12,48 մլն.դրամով**:

2. Էլեկտրաէներգիայի արտահանման դիմաց մատուցած ծառայություններից եկամուտ

2024թ. հունվար ամսվա փաստացի արտահանված 96,500 մլն.կվտժ Էլեկտրաէներգիայի դիմաց մատուցած ծառայությունների եկամուտը կազմել է.

96,500 մլն.կվտժ $\times$ 0,0659 դրամ/կվտժ, ընդամենը **6,359 մլն.դրամ**:

2024թ. փետրվար-դեկտեմբեր ամիսներին փաստացի արտահանված 1441,334 մլն.կվտժ Էլեկտրաէներգիայի դիմաց մատուցած ծառայություններից եկամուտը կազմել է.

1441,334 մլն.կվտժ $\times$ 0,0715 դրամ/կվտժ, ընդամենը **103,055 մլն.դրամ**:

2024թ. Էլեկտրաէներգիայի արտահանման դիմաց մատուցած ծառայություններից եկամուտը կազմել է.

$$6,359 \text{ մլն.դրամ} + 103,055 \text{ մլն.դրամ} = 109,414 \text{ մլն.դրամ:}$$

2024թ. նախահաշվով պլանավորած **103,6 մլն.դրամից** փաստացի ստացված եկամուտն ավել է **5,81 մլն.դրամով**:

Այսպիսով հիմնական գործունեությունից և արտահանման դիմաց ծառայությունների մատուցումից 2024 թվականին ընկերության եկամուտը կազմել է՝

$$507,026 \text{ մլն.դրամ} + 109,414 \text{ մլն.դրամ} = 616,44 \text{ մլն.դրամ}$$

3. Շնորհի ստացված ակտիվներից եկամուտ

Այս հոդվածն իրենից ներկայացնում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունից որպես շնորհի ստացված հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների մաշվածության չափով հաշվեգրված եկամուտ: Պլանավորված 87,1 մլն.դրամ եկամտի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 87,73 մլն.դրամ: Տարբերությունը կազմել է **0,63 մլն.դրամ**: Այս հոդվածով նախատեսված եկամտի և ծախսի գումարները համարժեք են, ուստի ընկերության հաշվապահական շահույթի վրա ազդեցությունը հավասար է 0-ի:

4. Ավանդից տոկոսային եկամուտ

1. 2023թ. հոկտեմբերի 3-ին **Արդշինբանկում** ավանդագրվել է 30,0 մլն.դրամ տարեկան **9,0%**՝ 280 օր ժամկետով, որն ավարտվել է 2024թ. հուլիսի 09-ին: 01.01.2024թ.-09.07.2024թ. ընկած ժամանակահատվածի համար հաշվեգրվել է **1,405 մլն.դրամ** տոկոսային եկամուտ ($30,0 \text{ մլն.դրամ} \times 9,0\% / 365 \text{ օր} \times 190 \text{ օր}$),

2. 2023թ. դեկտեմբերի 25-ին **Կոնվերս բանկում** ավանդագրվել է **70,0 մլն.դրամ** տարեկան **9,5%` 366 օր** ժամկետով, որն ավարտվել է 25 դեկտեմբերի 2024թվականին: 01.01.2024թ-25.12.2024թ. ընկած ժամանակահատվածի համար հաշվեգրվել է **6,523 մլն.դրամ** տոկոսային եկամուտ ($70,0 \text{ մլն.դրամ} \times 9.5\% / 366 \text{ օր} \times 359 \text{ օր}$):

3. 2024թ. հուլիսի 10-ին **Արդշինբանկում** ավանդագրվել է **50,0 մլն.դրամ** տարեկան **9,25%` 370 օր** ժամկետով, որն ավարտվելու է 2025թ. հուլիսի 14-ին: 11.07.2024թ-31.12.2024թ. ընկած ժամանակահատվածի համար հաշվեգրվել է **2,211 մլն.դրամ** տոկոսային եկամուտ ($50,0 \text{ մլն.դր} \times 9.25\% / 366 \text{ օր} \times 175 \text{ օր}$),

Այսպիսով ավանդներից 2024 թվականին ընկերության տոկոսային եկամուտը կազմել է`

1,405 մլն.դր + 6,523 մլն.դր + 2,211 մլն.դր = 10,139 մլն.դրամ

Նախահաշվով պլանավորվածի համեմատ ընկերությունն ապահովել է **2,22 մլն.դրամի** ավել եկամուտ, որն առաջացել է 2024թվականի հուլիսի 10-ին նոր ավանդի տոկոսային եկամուտից:

5. Այլ եկամուտ

0,234 մլն.դրամը հիմնական միջոցների օտարումից եկամուտն է և **0,068 մլն.դրամը`** ընկերության մատակարարներին հաշվարկված տույժերից եկամուտը:

ԾԱԽՍԵՐ

Ընկերության տարեկան փաստացի գործառնական ծախսերը կազմել են **659,2 մլն.դրամ`** նախատեսված **676,12 մլն.դրամի** դիմաց, տնտեսումը կազմել է **16,92 մլն.դրամ:**

1. «Հաշվարկներ աշխատակազմի հետ» հոդվածով փաստացի ծախսը կազմել է **368,46 մլն.Դրամ**, որը համապատասխանում է նախահաշվով նախատեսվածին:

2. «Տրանսպորտային միջոցների պահպանման ծախսեր» հոդվածով փաստացի ծախսը կազմել է **5,6 մլն.դրամ** նախահաշվով նախատեսված **8,59 մլն.դրամի** դիմաց, տնտեսումը կազմել է **2,99 մլն.դրամ**, որը հիմնականում առաջացել է վառելիքի տնտեսումից:

3. «Ամորտիզացիոն մասհանումներ» հոդվածով փաստացի ծախսը կազմել է **124,49 մլն.դրամ** նախահաշվով պլանավորված **128,25 մլն.դրամի** դիմաց, տնտեսումը կազմել է **3,76 մլն.դրամ:**

4. «Այլ ծախսեր (վարչական)» հոդվածով փաստացի ծախսը կազմել է **124,25 մլն.Դրամ`** նախահաշվով նախատեսված **134,31 մլն.դրամի** դիմաց, տնտեսումը` **10,06 մլն.դրամ:** Այս հոդվածում ներառված ծախսերի մասով ընկերությունը 2024թ. ապահովել է տնտեսում կապի ծառայություններ հոդվածով` **1,05 մլն.դրամի** չափով, գործուղումների մասով` **4,39 մլն.դրամի** չափով, գրասենյակային, տնտեսական և այլ առարկաներ հոդվածով` **0,71 մլն.դրամի** չափով, բանկեր հոդվածով` **0,09 մլն.դրամի** չափով, ներկայացուցչական ծախսեր հոդվածով` **0,42 մլն.դրամի** չափով, ծրագրի սպասարկում և ձեռք բերում հոդվածով` **2,32 մլն.դրամի** չափով, անձնակազմի վերապատրաստում հոդվածով` **0,18 մլն.դրամի** չափով և չնախատեսված ծախսեր հոդվածով` **0,9 մլն.դրամի** չափով:

5. «Լիցենզիոն տուրք» հոդվածով փաստացի ծախսը **5,0 մլն.դրամ** է, որը համապատասխանում է նախահաշվով պլանավորվածին:

6. «Կարգավորման պարտադիր վճար» հոդվածով փաստացի ծախսը կազմել է **0,55 մլն.դրամ**, որը համապատասխանում է նախահաշվով պլանավորվածին:

7. «Նորմատիվ փաստաթղթերի մշակման, տեխնոլոգիական կորուստների հաշվարկման ծախսեր» հոդվածով փաստացի ծախսը համապատասխանում է նախահաշվով պլանավորվածին և կազմում է **7,0 մլն.դրամ**:

8. «Վարձակալության վճար» հոդվածով փաստացի ծախսը համապատասխանում է նախահաշվով պլանավորվածին և կազմում է **22,18 մլն.դրամ**:

9. «Հարկեր, տուրքեր, պարտադիր վճարումներ» հոդվածով փաստացի ծախսը կազմել է **1,67 մլն.դրամ**՝ նախահաշվով պլանավորված **1,78 մլն.դրամի** դիմաց, տնտեսումը կազմել է **0,11 մլն.դրամ**:

Հաշվետվություն
Դրամական միջոցների հոսքերի մասին (Հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից հոսքեր		
Հաճախորդներից ստացված մուտքեր	726,334	628,659
Վճարումներ մատակարարներին	(161,916)	(160,176)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(372,982)	(343,417)
Վճարումներ գործուղումների համար	(4,223)	(6,874)
Վճարված հարկեր, տուրքեր և այլ՝ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(98,995)	(80,251)
Վճարված շահութահարկ	-	(1,000)
Այլ մուտքեր	66	-
Այլ ելքեր	-	(270)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	88,284	36,671
Ներդրումային գործունեությունից հոսքեր		
Ընթացիկ ֆինանսական ներդրումներից մուտքեր	108,718	74,769
Ընթացիկ ֆինանսական ներդրումներից ելքեր	(50,000)	(170,000)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	273	150
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից ելքեր	(6,414)	(7,633)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	52,577	(102,714)
Ֆինանսական գործունեությունից հոսքեր		
Շահաբաժինների վճարումից ելքեր	(11,163)	
Վարձակալության գծով պարտավորության մարումից ելքեր	(19,180)	(12,736)
Վարձակալության գծով տոկոսների վճարումից ելքեր	(7,438)	(2,994)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(37,781)	(15,730)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	(103,080)	(81,773)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	-	-
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	58,125	139,898
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	161,205	58,125

ՀՀ Էներգահամակարգի ցուցանիշներ (մլն.կՎտժ)

Ցուցանիշ	2024թ.
Էլեկտրաէներգիայի արտադրանքը, այդ թվում՝	8893,8
«ՀԱԷԿ» ՓԲԸ	2830,0
Ջերմային կայաններ, այդ թվում՝	3510,0
«Հրազ.ՋԷԿ» ԲԲԸ	96,6
«Գազալարոմ Արմենիա» ՓԲԸ (Հրազդան-5)	373,3
«Երևան ՋԷԿ» ՓԲԸ	1271,3
«Արմփաուեր» ՓԲԸ	1768,8
Հիդրոկայաններ և փոքր էլեկտրակայաններ, այդ թվում՝	2553,8
«ՄԷԿ» ՓԲԸ	365,8
«Քոնթոլր Գլոբալ» ՓԲԸ	689,3
Փոքր էլեկտրակայաններ	1498,7
Էլեկտրաէներգիայի առաքումը, այդ թվում՝	8530,5
«ՀԱԷԿ» ՓԲԸ	2629,1
«Հրազ.ՋԷԿ» ԲԲԸ	89,6
«Գազալարոմ Արմենիա» ՓԲԸ (Հրազդան-5)	356,1
«Երևան ՋԷԿ» ՓԲԸ	1233,0
«Արմփաուեր» ՓԲԸ	1708,9
«ՄԷԿ» ՓԲԸ	357,3
«Քոնթոլր Գլոբալ» ՓԲԸ	683,3
Փոքր էլեկտրակայաններ	1473,2
«ԲԷՑ» ՓԲԸ ցանցերում Էլեկտրաէներգիայի կորուստը	143,2
Շուկայի մասնակիցների սպառում	2035,2
«ՀԷՑ» ՓԲԸ-ի սպառում	5106,1
ՀՀ ընդհանուր սպառում	7141,3
Շուկայի մասնակիցների սպառումը ՀՀ սպառման նկատմամբ, %	28,5
«ՀԷՑ» ՓԲԸ-ի սպառումը ՀՀ սպառման նկատմամբ, %	71,5
Էլեկտրաէներգիայի ներհոսք Իրանից	7,4
Էլեկտրաէներգիայի արտահոսք Իրան	1465,1
Էլեկտրաէներգիայի ներհոսք Վրաստանից	137,4
Էլեկտրաէներգիայի արտահոսք Վրաստան	72,7

Մատակարարների էլեկտրաէներգիայի սպառումը, կՎտժ

Մուտք	Մատակարար	2022թ	2023թ	2024թ	Ընդամենը
02.2022	«Էներեքս»	22 189 711	50 086 446	100 514 248	172 790 406
02.2022	«Էներջի Սփիլայ»	235 113 126	471 604 784	770 366 805	1 477 084 714
09.2022	«Էներջի Պրովայդեր»	2 895 298	63 610 838	178 444 344	244 950 480
05.2023	«Էներջի Փաուեր Ֆլու»	0	1 055 285	725 819	1 781 104
04.2024	«Վոլտա Էներջի»	0	0	4 218 096	4 218 096
04.2024	«Արեներջի»	0	0	321 697	321 697
12.2024	«Մանանա Գրեյն»	0	0	27 283	27 283
	Ընդամենը	260 198 135	586 357 353	1 054 618 292	1 901 173 780

Որակավորված սպառողների էլեկտրաէներգիայի սպառումը, կՎտժ

Մուտք	Որակավորված սպառող	2022թ	2023թ	2024թ	Ընդամենը
02.2022	«Վեոլիա Ջուր»	11 073 098	27 282 461	26 648 932	65 004 491
04.2022	«Գեոպրոմայնինգ Գոլդ»	68 926 863	39 631 877	30 354 040	138 912 780
01.2023	«Չանգեզուրի ՊՄԿ»	0	450 854 464	523 170 981	974 025 445
01.2023	«Հարավկովկասյան երկաթուղի»	0	23 096 929	36 075 923	59 172 852
01.2023	«Ասկե Գրուպ»	0	107 119 343	70 857 161	177 976 503
01.2023	«Էքսպրես Գազ»	0	505 323	277 272	782 595
02.2023	«Թեղուտ»	0	39 160 215	0	39 160 215
04.2023	«Էկոս»	0	7 836 453	10 261 123	18 097 575
06.2023	«Ռիչ Գազ»	0	267 753	404 104	671 857
07.2023	«ԱՄՓ Հոլդինգ»	0	2 420 751	5 372 096	7 792 847
01.2024	«Ագարակի ՊՄԿ»	0	0	104 297 346	104 297 346
03.2024	«Արաքս թոչնաֆաբրիկա»	0	0	4 424 505	4 424 505
07.2024	«Վալենսիա»	0	0	1 159 638	1 159 638
07.2024	«Աշտարակի Կոնյակի Տուն»	0	0	237 483	237 483
07.2024	«Ալափմետ»	0	0	3 914 559	3 914 559
10.2024	«Պոռոշյանի Կոնյակի Գործարան»	0	0	204 361	204 361
12.2024	«Լենտեքս»	0	0	2 348	2 348
	Ընդամենը	79 999 961	698 175 568	817 661 870	1 595 837 399

Էլեկտրակայանների սեփական կարիքների սպառումը, կՎտժ

Էլեկտրակայաններ	2022թ	2023թ	2024թ	Ընդամենը
«Երևանի ՋԷԿ»	393 003	1 646 780	1 747 047	3 786 830
«Հրազդան-5 ՋԷԿ»	0	1 514 700	5 188 315	6 703 015
«ՀՎԷԿ»	0	13 014 315	9 301 664	22 315 979
«ՄԷԿ»	0	2 781 237	3 556 447	6 337 684
Ընդամենը	393 003	18 957 032	19 793 473	39 143 508

ԷՄՇ մասնակիցների սպառման համամասնությունը, %




ԷՄՇ Մասնակից	2022թ	2023թ	2024թ
Մ - Մատակարարներ	53,4%	40,4%	51,8%
ՈՍ - Որակավորված սպառողներ	16,4%	48,1%	40,2%
ԷԿ - Էլեկտրակայաններ	0,1%	1,3%	1,0%
ԲԷՑ - Բարձրավորյալ Էլեկտրացանցեր	30,1%	10,1%	7,0%
ԷՄՇ մասնաբաժին	6,9%	20,8%	28,5%
ՀԷՑ մասնաբաժին	93,1%	79,2%	71,5%

Մատակարարների սպառողների թիվը

Մատակարար	2022թ	2023թ	2024թ	Ընդամենը
«Էներգես»	8	19	65	92
«Էներջի Սփիլայ»	2	49	67	118
«Էներջի Պրովայդեր»	5	24	19	48
«Էներջի Փաուեր Ֆլուու»	0	2	2	0
«Վոլտա Էներջի»	0	0	12	12
«ԱրԷներջի»	0	0	1	1
«Մանանա Գրեյն»	0	0	1	1
Ընդամենը	15	94	167	271

ԷՄՇ մասնակիցների թիվը

ԷՄՇ Մասնակից	2022թ	2023թ	2024թ	Ընդամենը
Մատակարարի Սպառողներ	15	109	276	276
Որակավորված Սպառողներ	2	10	16	16



ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

[Handwritten signature]

ՆՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խորհրդի գործառույթները

Կորպորատիվ կառավարման Կանոնագրքի 8-րդ հոդվածը և Ընկերության կանոնադրության 13.4 հոդվածը սահմանում է Խորհրդի բացառիկ իրավասությունները: Խորհրդի պատվիրակված իրավասություններ չեն սահմանվել:

Խորհրդի կազմը

Ներկայումս Ընկերության խորհուրդը բաղկացած է հինգ անդամից:

	Պաշտոն	Անուն Ազգանուն	Գործադիր	Ոչ գործադիր	Անկախ	Խորհրդի անդամ է սկսած
1.	Նախագահ	Լիանա Զովհաննիսյան		Ոչ գործադիր		17.12.2021թ. Նախագահ՝ 24.12.2021թ.
2.	Անդամ	Վարդան Ենգիդունյան		Ոչ գործադիր		25.06.2014թ.
3.	Անդամ	Ռոմիկ Ավոյան		Ոչ գործադիր		17.09.2024թ.
4.	Անդամ	Երանուհի Ազոյան		Ոչ գործադիր		23.12.2016թ.
5.	Անդամ	Նորայր Զարությունյան	Գործադիր			24.12.2024թ.

Խորհրդի անդամներից չորսը ոչ գործադիր են: Խորհրդի ոչ գործադիր անդամն այն անձն է, ով ներգրավված չէ Ընկերության կամ նրա որևէ դուստր ընկերության ընթացիկ ղեկավարման մեջ:

Խորհրդի մեկ գործադիր անդամը Ընկերության ամենօրյա ղեկավարման մեջ ներգրավված անձ է:

Խորհրդի կազմում անկախ անդամ չկա: